ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՓԻԼԱՎՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՆՁԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԺԳ.00.01- «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2018

Ատենախոսության թեման հաստատվել է **Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում:**

Գիտական ղեկավար՝	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ա.Օ. Թոփուզյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Մ.Մ. Մանուկյան** մանկավարժական գիտությունների թեկնածու **Հ.Հ. Կարապետյան**
Առաջատար կազմակերպություն՝	**«Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018 թ. հունիսի 6-ին՝ ժամը 12^{00}-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2018թ. մայիսի 4-ին:

Մանկավարժության 020 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկավարժական գիտ. թեկնածու, դոցենտ՝ **Ա.Հ.Սվաջյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Հասարակության զարգացման ներկա փուլում արագորեն փոփոխվում են մարդ – հասարակություն փոխհարաբերությունները: Անձի զարգացման գործընթացում այդ փոփոխություններն առաջադրում են քաղաքացիական դիրքորոշման նոր տեսլականներ: Այս պայմաններում քաղաքացիական գիտակցությամբ օժտված մարդը ներկայանում է որպես հասարակության զարգացման հզոր խթան և պետության կազմակերպման ու ամրապնդման առաջնային լծակ:

Քաղաքացիությունը մարդ-պետություն փոխհարաբերությունների սոսկ դրսևորում չէ, այն մարդու համակարգային և համապարփակ որակ է: Սովորողների քաղաքացիական գիտակցության ձևավորման գործընթացի արդիականությունն անմիջականորեն պայմանավորված է երեք գործոններով. 1) անձի զարգացմամբ, 2) հասարակական կազմակերպմամբ, 3) համամարդկային ինտեգրմամբ:

Ժամանակակից աշխարհում սոսկ օրինապաշտ քաղաքացու կերպարն այլևս արդիական չէ: Քաղաքացիական գիտակցությունը հասարակական հարաբերությունների կարգավորման գործիքից վերաճել է անձի բնութագրական որակի: Մարդը ինքնակարգավորումից թևակոխել է փոխադարձ կարգավորման ժամանակաշրջան, հետևաբար, կարևոր է, որ տվյալ պայմաններում մարդն ընդունի ինքն իրեն և դրսևորի քաղաքացիական գիտակցության դիրքերից: Նման մոտեցումն արտահայտում է քաղաքացու պատասխանատու վերաբերմունքը ոչ միայն իր, իր ընտանիքի, այլ նաև այն հասարակության նկատմամբ, որի անդամն է ինքը: Դրանով իսկ, իր հետևողական և գիտակցական կողմնորոշման շնորհիվ անձն ի վիճակի է կանխարգելելու մի շարք արատների անցանկալի դրսևորումները:

Ժամանակակից հասարակությունն իրեն շրջապատող իրականության հետ ակտիվ փոխազդեցության մեջ գտնվող ճկուն համակարգ է: Կեցության նման պայմաններում հասարակությանն անհրաժեշտ են ինքնատիրապետման բարձր մակարդակ ունեցող անհատներ: Քաղաքացիական դիրքորոշումն ամբողջացնում և ինքնագիտակցման ու ինքնագնահատման ամենաբարձր աստիճանին է հասցնում անձի՝ սեփական որակների դիտարկումը: Այդ որակներից շատերը, անշուշտ, ձևավորվում են դաստիարակության բազմաթիվ ձևերի ազդեցությամբ, սակայն ուղղակիորեն դրսևորվում են հենց

քաղաքացիականության մեջ. քաղաքացիական դաստիարակությամբ ամբողջանում է անձի ինքնատիրապետումը:

Այսօր համամարդկային խնդիրները պահանջում են արագ արձագանքում առկա մարտահրավերներին, դրանց լուծումների առաջադրում, ինքնակազմակերպում, ուղղորդված փոխգործակցություն: Սակայն միայն քաղաքացիական գիտակցությամբ օժտված անհատն է ունակ ըմբռնելու ժամանակի խնդիրներն ու առաջնահերթությունները, նախաձեռնողաբար ընթանալու դրանց հաղթահարման ու կայացման ճանապարհով:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև հայաստանյան իրականության հետևյալ առաջնահերթություններով.

1. Անձի ձևավորման համակարգում դեռևս հստակ սահմանված և չէ «անձի քաղաքացիական դաստիարակություն» հասկացությունը: Հիմնականում այն նույնականացվում է իրավական կամ հայրենասիրական դաստիարակության հետ: Հարկ է հստակ սահմանել քաղաքացիական դաստիարակության դերն ու նշանակությունը անձի զարգացման գործընթացում:
2. Արդի հասարակությունը բնութագրվում է ակնառու բազմափեղկվածությամբ, որը փոխադարձ անհանդուրժողականության, երկխոսության բացակայության արդյունք է: Հարկ է հանդուրժողականությունը բնութագրել՝ որպես ինտեգրատիվ անձնային որակ, տարակարծիք մարդկանց առկա խնդիրները միահամուռ հաղթահարելու միջոց:
3. Դպրոցը միշտ էլ վճռորոշ դեր է խաղացել հասարակությունը բարեփոխելու գործընթացում: Այդ շրջանակներում կրթությունը ձգտում է ապահովել անձի քաղաքացիական դաստիարակությունը և ձևավորել անհանդուժող վերաբերմունք կոռուպցիոն երևույթների նկատմամբ: Ընդ որում, կոռուպցիոն ռիսկերի նկատմամբ անհանդուրժողականությունը սովորողը պիտի սկսի ձևավորել իր իսկ դպրոցի օրինակով:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև հայաստանյան իրականության մեջ առկա խնդրահարույց մի շարք հանգամանքներով, որոնք հակասություն են առաջացնում խնդրի տեսական ընկալման և գործնականում առկա իրավիճակի միջև: Մասնավորապես՝

- Հայաստանյան իրականության մեջ թեև բազմիցս շեշտադրվել է քաղաքացիական հասարակության ձևավորման կարևորությունը, այնուհանդերձ, առ այսօր դեռևս մշակված չէ քաղաքացիական դաստիարակության ազգային հայեցակարգ:

- Հայաստանի Հանրապետության որդեգրած կառավարման խորհրդարանական մոդելը ենթադրում է քաղաքացու կողմից պետության ղեկավար մարմինների մեկանգամյա և փաթեթային ընտրություն: Մեծանում է քաղաքացու պատասխանատվությունը իր, հայրենիքի ապագայի նկատմամբ, որն էլ իր հերթին պահանջում է քաղաքական գիտակցության և իրավական մշակույթի ձևավորվածության բարձր մակարդակ: Պետք է փաստել, որ այդ գիտակցությունը դեռևս ներառված չէ կրթության բովանդակության և դրանք արտացոլող փաստաթղթերում, չեն ապահովվում բավարար չափով այս ուղղությամբ միջառարկայական կապերը, չկա քաղաքացիական դաստիարակության իրականացման մանկավարժական համապարփակ մոդել, սահմանված չեն այդ գործընթացի կառավարման մանկավարժական ուղենիշները և ձևավորված չէ քաղաքացու ժամանակակից կատարելատիպը:
- Չի ապահովվում ընտանեկան և դպրոցական դաստիարակության գործընթացների շարունակականությունը, համաժամանակյա, համաձայնեցված ազդեցությունը:

<u>Հետազոտության օբյեկտը</u> դպրոցականների քաղաքացիական դաստիարակության գործընթացն է:

<u>Հետազոտության առարկան</u> դպրոցականների քաղաքացիական դաստիարակության համակարգն է:

Հետազոտության նպատակն է՝ հիմնախնդրի պատմության, դպրոցի առկա վիճակի ուսումնասիրության արդյունքների հիման վրա դպրոցականի անձի զարգացման գործընթացում քաղաքացիական դաստիարակության արդյունավետ համակարգի ու մանկավարժական պայմանների մշակումը:

<u>Հետազոտության վարկածը</u> ենթադրության մեջ է, որ դպրոցականի անձի զարգացման գործընթացում քաղաքացիական դաստիարակության դերը ավելի շոշափելի կլինի եթե.

1. Վերհանվեն քաղաքացիական դաստիարակության մասին հայ և արևմտյան մանկավարժների անձի զարգացման տեսություններում և գաղափարներում ամփոփված այն մտքերը, որոնք կարող են օգտակար լինել ժամանակակից դպրոցին:
2. Մշակվեն.

- դպրոցում քաղաքացիական դաստիարակության **նպատակը, ուսումնական հաստատությունում** քաղաքացիական դաստիարակության **և անձի դաստիարակվածության գնահատման չափանիշները**:

- դպրոցում քաղաքացիական դաստիարակության գործընթացի կառավարման հստակ համակարգ, դպրոցականի քաղաքացիական դաստիարակության ժամանակակից մոդել և դրա իրականացման մանկավարժական պայմաններ,
- դաստիարակության մյուս ձևերի հետ քաղաքացիական դաստիարակության ինտեգրման սխեման, հանդուրժող ուսուցչի բնութագիրը և հայ ապագա քաղաքացու կատարելատիպը,

3. Սահմանվեն և վերլուծվեն կրթական համակարգում դպրոցականի քաղաքացիական դաստիարակությանը խոչընդոտող կոռուպցիոն ռիսկերն ու դրսևորումները:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Վերլուծել քաղաքացիական դաստիարակությանը վերաբերող տեսություններն ու գաղափարները հայ և արտասահմանյան մանկավարժության մեջ:
2. Սահմանել ուսումնական հաստատություններում անձի քաղաքացիական դաստիարակության նպատակը, նրա դաստիարակվածության և քաղաքացիական դաստիարակության գնահատման չափանիշները, ինչպես նաև որոշել հանդուրժող ուսուցչի մասնագիտական կոմպետենտության մակարդակը:
3. Վերլուծել հանրակրթական դպրոցում դասավանդվող «Հասարակագիտություն» ուսումնական առարկայի ծրագիրը, դասագրքերը:
4. Մշակել արդի պայմաններում դպրոցականների քաղաքացիական դաստիարակության բարելավման արդյունավետ դիդակտիկական համակարգ և մանկավարժական պայմաններ:

Հետազոտության մեթոդները. Հետազոտության խնդիրներն իրականացնելու համար կիրառվել են.

- ✓ համապատասխան գրականության համեմատական վերլուծության, համադրման, ընդհանրացման, համակարգային և տարբերակված մոտեցումների մեթոդները,
- ✓ դիտման, զրույցի ու հարցազրույցի, դերային խաղի, անկետավորման, մաթեմատիկական վիճակագրության, մանկավարժական մշտադիտարկման մեթոդները:

Հիմնախնդրի ուսումնասիրվածության մակարդակը. Ուսումնասիրության համար ելակետային սկզբնաղբյուրներ են հանդիսացել հայ, խորհրդային,

ռուսական, արևմտյան փիլիսոփայական, մանկավարժական, հոգեբանական ուսումնասիրությունները, առանձին հեղինակների դիրքորոշումներն ու մոտեցումները:

Պատմափիլիսոփայական ուսումնասիրությունները փաստում են, որ քաղաքացիական դաստիարակության հրամայականը արդիական էր դեռևս անտիկ ժամանակներում. խնդրին անդրադարձել են Պլատոնը, Արիստոտելը, Ցիցերոնը, Քվինտիլիանոսը և այլք:

Հայ իրականության մեջ դիտարկվող խնդրին անդրադարձել են Գ. Տաթևացին, Խ. Աբովյանը, Հ. Հինդլյանը, Հ. Թումանյանը, Ղ. Ալիշանը, Ղ. Աղայանը, Մ. Մաշտոցը, Մագիստրոս Պահլավունին, Ռաֆֆին, և այլք:

ՀՀ անկախության տարիներին քաղաքացիական դաստիարակության խնդիրներին անդրադարձել են Հ. Շահբազյանը, Ս. Արզումանյանը, Ա. Թոփուզյանը, Հ. Կարապետյանը, Վ. Բրուտյանը և այլք:

Մեր հետազոտական աշխատանքի համար հիմք են ծառայել Ժ. Ժ. Ռուսոյի, Ի. Պեստալոցիի, Ս. Շացկու, Վ. Բելինսկու, Ն. Չերնիշևսկու, Ն. Կրուպսկայայի, Ա. Մակարենկոյի, Կ. Ուշինսկու, Զ. Ի. Ռավկինի, Մ. Բոգուսլավսկու, Յ. Բաբանսկու և այլոց մանկավարժական աշխատությունները:

Անձի զարգացման համատեքստում քաղաքացիական դաստիարակության գաղափարներին են անդրադարձել Զ. Ֆրոյդը, Կ. Ռոջերսը, Կ. Յունգը, Ա. Ադլերը, Ա. Մասլոուն, Ջ. Դյուին, Է. Էրիկսոնը:

Քաղաքացիական դաստիարակության պատկերացումներն ակտիվորեն ձևավորվել և զարգացել են Ֆ. Կոռոլյովի, Ն. Կոնստանտինովի, Տ. Կոռնեյչիկի, Ա. Պիսկունովի, Զ. Ռավկինի, ինչպես նաև Ս. Եգորովի, Մ. Մուխինի, Մ. Պլոխովայի, Ֆ. Ֆրադկինի, Վ. Ֆրոլովի, Ս. Չերնիկի, Վ. Շատալովի հետազոտություններում:

Քաղաքացիական որակների ձևավորման խնդիրները և քաղաքացիական դաստիարակության կազմակերպման առանձնահատկությունները ուսուցման գործընթացում, արտադասարանական, արտադպրոցական մանկական և երիտասարդական հասարակական կառույցներում ուսումնասիրվել են Գ.Գրևցևայի, Ի.Ֆրումինի, Բ. Վուլֆովի, Վ. Կոժոկարի, Դ. Յակովլևի և այլոց կողմից:

Քաղաքացիական դաստիարակության իրականացման ձևերի և մեթոդների ուսումնասիրությանն են անդրադարձել Բ. Լիխաչևը, Ա. Նիկիտինը, Ի.Խարլամովը, Բ. Պետրովը, Օ. Բոգդանովը, Լ. Նովիկովան, Ե. Բոնդարևսկին,

Դ. Գրիշինը, Գ. Ֆիլոնովը, Յ. Ռեզնիկը, Յ. Սոկոլովը, Ի. Ֆրումինը, Ն. Շչուրկովան, Ն. Էլիասբերգը, Լ. Կիրշները:

Թեմայի ուսումնասիրության գործընթացում կարևորել ենք նաև Ի.Ֆրիշմանի, Լ. Գորդինի, Վ. Կոռոտովի, Ս. Բելենցովի, Ա. Պրուտչենկովի, Դ. Ֆելդշտեյնի, Վ. Շեպելի ուսումնասիրությունները:

Հետազոտության գիտական նորույթը.

1. Սահմանվել է ուսումնական հաստատությունում քաղաքացիական դաստիարակության նպատակը:
2. Մշակվել է դպրոցում իրականացվող քաղաքացիական դաստիարակության համապարփակ համակարգ, որն ընդգրկում է.
   - դպրոցականների քաղաքացիական դաստիարակվածության և ուսումնական հաստատությունում իրականացվող քաղաքացիական դաստիարակչական աշխատանքի գնահատման չափանիշները,
   - ապագա քաղաքացու կատարելատիպը,
   - քաղաքացիական դաստիարակության գործընթացի կառավարման մոդելը,
   - դպրոցում իրականացվող քաղաքացիական դաստիարակության ժամանակակից մոդելը,
   - հանդուրժող ուսուցչի մասնագիտական կոմպետենտության բնութագիրը:
3. Մշակվել են արդի պայմաններում դպրոցականների քաղաքացիական դաստիարակության գործընթացի բարելավման մանկավարժական պայմանները:

Հետազոտության տեսական նշանակությունը: Ուսումնական հաստատություններում իրականացվող քաղաքացիական դաստիարակության սահմանված նպատակը, դպրոցի քաղաքացիական դաստիարակության իրականացման արդյունավետ համակարգը, արդի պայմաններում դպրոցականների քաղաքացիական դաստիարակության ժամանակակից մոդելն ու մանկավարժական պայմանները կարող են՝

- հարստացնել ընդհանրապես դաստիարակության, մասնավորապես՝ քաղաքացիական և հայրենասիրական դաստիարակության, դպրոցի կառավարման տեսությունն ու պրակտիկան,
- նպաստել «Հասարակագիտություն» առարկայի բովանդակության հարստացմանը, դպրոցականների իրավական գիտակցության, քաղաքացիական դիրքորոշման ձևավորմանը, քաղաքացիական և դաստիարակության այլ ձևերի ինտեգրմանը:

Հետազոտության գործնական նշանակությունը: Ուսումնական հաստատություններում քաղաքացիական դաստիարակության նպատակը, անձի դաստիարակվածության և ուսումնական հաստատության գնահատման չափանիշները, դպրոցի քաղաքացիական դաստիարակության գործընթացի ղեկավարման մոդելը, դպրոցականների քաղաքացիական դաստիարակության ժամանակակից մոդելն ու մանկավարժական պայմանները, հանդուրժող ուսուցչի բնութագիրն ու ապագա քաղաքացու կատարելատիպը կարող են՝

- հարստացնել ավագ դպրոցի դաստիարակչական պրակտիկան, դրվել դպրոցի դաստիարակչական գործընթացի հիմքում, նպաստել դպրոցում քաղաքացիական դաստիարակության ողջ աշխատանքը արդյունավետ կառավարելուն և համակարգելուն,
- օգտակար լինել դպրոցի տնօրեններին, դասվար-դասղեկներին, դաստիարակության տեսության և պրակտիկայի հարցերով զբաղվող բուհի դասախոսներին, մանկավարժների վերապատրաստման հարցերով զբաղվող մասնագետներին, մանկավարժական բուհերի ուսանողներին:

Պաշտպանության ներկայացվող դրույթները.

1. Հայ և արևմտյան մանկավարժների, հոգեբանների՝ անձի զարգացման տեսությունների ու գաղափարների լուսաբանումն ու ժամանակակից պրակտիկայում կիրարկումը մեծապես նպաստում է դպրոցականների քաղաքացիական դաստիարակության և դաստիարակության այլ ձևերի ինտեգրմանը:
2. Դպրոցում իրականացվող քաղաքացիական դաստիարակության արդյունավետ համակարգի, հանդուրժող ուսուցչի բնութագրի, ժամանակակից քաղաքացու կատարելատիպի մշակումը, քաղաքացիական դաստիարակության գործընթացը դպրոցում դարձնում են ավելի արդիական, նպատակամետ, համակարգված և կազմակերպված:
3. Կրթական համակարգում առկա կոռուպցիոն ռիսկերի և դրսևորումների վերհանումը, դրանց նկատմամբ հասարակական բացասական վերաբերմունք, կարծիք ձևավորելը կնպաստեն քաղաքացիական դաստիարակությանը խոչընդոտող բացասական գործոնները բացառելուն:
4. Դպրոցում իրականացվող քաղաքացիական դաստիարակության ժամանակակից մոդելը և մշակված մանկավարժական պայմանները կնպաստեն դպրոցականների քաղաքացիական և հայրենասիրական դաստիարակության, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների ինտեգրմանն ու ընտանիք–դպրոց կապի ամրապնդմանը:

Հետազոտության արդյունքները քննարկվել է «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 02.03.2018թ. կայացած N 9 նիստում:

Հետազոտության բազա են հանդիսացել ՀՊՄՀ հենակետային վարժարանը /ավագ դպրոց/, թիվ 65 ավագ դպրոցը և ԵՊԼՀ-ն /1-ին և 2-րդ կուրսեր/:

Հետազոտությունն իրականացվել է երեք փուլով.

Առաջին փուլում /2015-2016/ հավաքվել, ուսումնասիրվել և համակարգվել է թեմային առնչվող գրականությունը:

Երկրորդ փուլում /2016-2017/ հստակեցվել է հետազոտության բովանդակությունը, մշակվել են հարցաթերթիկներ, որոնց միջոցով անցկացվել են սոցիոլոգիական ուսումնասիրություններ, ՀՊՄՀ-ի ավագ դպրոցի աշակերտական խորհրդի հետ պլանավորվել, անցկացվել ու վերլուծվել է թեմայի հիմնախնդրի վերաբերյալ «Ընտրություն» դերային խաղը, գրվել և տպագրվել են հոդվածներ:

Երրորդ փուլում /2017-2018/ շարադրվել է ատենախոսությունը, մշակվել և մոդելավորվել են սխեմաներ, գծապատկերներ, գրվել են հոդվածներ, անցկացվել են ինքնագնահատման թեստ, հարցաթերթիկային հարցումներ, հստակեցվել է ատենախոսության ներածությունը, ձևակերպվել են եզրակացությունները, համակարգվել է գրականության ցանկը:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 155 էջ:

Օգտագործվել է 198 աղբյուր՝ հայերեն և օտար լեզուներով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված է աշխատանքի նպատակը, ներկայացված են հետազոտության խնդիրները, բացահայտված է աշխատանքի տեսական և գիտական արժեքը, գիտական նորույթը, նշված են պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին գլուխը, որը վերնագրված է **«Քաղաքացիական դաստիարակությունը անձի զարգացման համակարգում»**, բաղկացած է երկու ենթավերնագրերից.

- Քաղաքացիական դաստիարակության հիմնախնդիրները հայ և արևմտյան մանկավարժների անձի զարգացման տեսություններում և գաղափարներում:
- Անձի քաղաքացիական դաստիարակության բնութագիրը:

Այս գլխում դիտարկվել են ինչպես արևմտյան մանկավարժների և հոգեբանների անձի զարգացման տեսությունները, այնպես էլ հայ մանկավարժական մտքում մեծ ավանդ ունեցող մանկավարժների տեսակետները քաղաքացիական դաստիարակության վերաբերյալ, առանձնացվել են թեմային առնչվող գաղափարները:

Ներկայացվել են քաղաքացիական դաստիարակության վերաբերյալ հայտնի մանկավարժների տեսակետները: Այդ թվում՝ Լիխաչյովի, Ֆիլոնովի, Վուլֆովի, Դավիդովի սահմանումները քաղաքացիական դաստիարակության վերաբերյալ: Ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա սահմանվել է դպրոցում քաղաքացիական դաստիարակության հետևյալ նպատակը.

Կրթական համապատասխան միջավայրի ստեղծման, անձնական ու հասարակական պահանջմունքների, ազգային ու համամարդկային արժեքների, ընտանեկան ու հասարակական նորմերի զուգորդման, հումանիստական հարաբերությունների հաստատման միջոցով օգնել դպրոցականին՝ տարբեր իրավիճակներում հիմնավորված մարդասիրական ընտրություն կատարելու, հավասարակշռված որոշում կայացնելու և համապատասխան վարք դրսևորելու հմտություններ ձևավորելու գործում:

Առանձնացվել են քաղաքացիական դաստիարակության գործընթացի բաղադրիչները, ներկայացվել է քաղաքացիական դաստիարակության կապը դաստիարակության այլ բաղադրիչների հետ, դպրոցում քաղաքացիական դաստիարակության իրականացման և դպրոցականի քաղաքացիական դաստիարակվածության մակարդակների գնահատման չափանիշները:

Ամբողջացնելով քաղաքացու նկատմամբ պատմական տարբեր ժամանակահատվածներում ձևավորված պահանջները, քաղաքացու անձնային և որակական առանձնահատկությունների վերաբերյալ տարբեր մանկավարժների կարծիքները, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության անձի դաստիարակության, ձևավորման, զարգացման գործում պետական քաղաքականությունը, փորձ է արվել ստեղծել ապագա հայ

քաղաքացու կատարելատիպը, որի դաստիարակությունն ու ձևավորումն իրականացվում է հայ դպրոցում:

Ատենախոսության երկրորդ՝ **«Սովորողների իրավաքաղաքացիական գիտակցության ձևավորման միջոցները ժամանակակից դպրոցում»** վերտառությամբ գլուխը բաղկացած է երեք ենթավերնագրերից.

- ««Հասարակագիտություն» առարկան, որպես սովորողների իրավաքաղաքացիական գիտակցության ձևավորման միջոց»,
- «Հանդուրժողականության, որպես դպրոցականի անձի համալիր հատկանիշի ձևավորման մանկավարժա-հոգեբանական հիմքերը»,
- «Կոռուպցիոն ռիսկերը, որպես դպրոցականի անձի դաստիարակությանը խոչընդոտող գործոն»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դպրոցում քաղաքացիական դաստիարակությունն իրականացվում է դասավանդվող բոլոր առարկաների միջոցով, մասնավորապես և հիմնականում՝ «Հասարակագիտություն» առարկայի շրջանակներում, կարևորվել է «Հասարակագիտություն» ուսումնական առարկայի ծրագրի, չափորոշիչների, 8-12-րդ դասարանների դասագրքերի ուսումնասիրությունը:

Որպես քաղաքացիական դաստիարակության իրականացման համար անհրաժեշտ նախապայման՝ ուսումնասիրվել է հանդուրժողականություն անձնային համալիր որակը: Տրվել են դրա հստակ բնորոշումը, ձևավորման մանկավարժա-հոգեբանական հիմքերը, մշակվել է հանդուրժող ուսուցչի բնութագիրը:

Մյուս կողմից, որպես քաղաքացիական դաստիարակությանը մեծապես խոչընդոտող գործոն, դիտարկվել են կոռուպցիոն ռիսկերը:

Ատենախոսության երրորդ գլուխը, որը վերնագրված է **«Սովորողների քաղաքացիական դաստիարակության ժամանակակից համակարգը»**, բաղկացած է երկու ենթավերնագրերից.

- «Դպրոցում քաղաքացիական դաստիարակության գործընթացի կառավարումն ու դրա իրականացման համար անհրաժեշտ մանկավարժական պայմանները»,
- «Քաղաքացիական դաստիարակվածության մակարդակի ուսումնասիրությունն ու գնահատումը դպրոցում»:

Ավագ դպրոցի աշակերտների շրջանում իրականացված հարցաթերթիկային հարցումների, դասալսումների, արտադասարանական միջոցառումների դիտումների և ուսուցիչների հետ զրույցների արդյունքների

հիման վրա մշակվել է քաղաքացիական դաստիարակության ամբողջական համակարգ, որը չափելի և գնահատելի է դարձնում քաղաքացիական դաստիարակության գործընթացը դպրոցում: Համակարգը ներառում է դպրոցի քաղաքացիական դաստիարակության գործընթացի կառավարման, իրականացման մանկավարժական համապարփակ մոդելները, մանկավարժական պայմանները, ժամանակակից քաղաքացու կատարելատիպը: Ինքնագնահատման թեստի միջոցով գնահատվել է սովորողների քաղաքացիական դաստիարակվածության մակարդակը: <<Ընտրություն>> դերային խաղի միջոցով ստուգվել է մշակված մանկավարժական պայմանների կիրառելիությունն ու հավաստիությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Փիլիսոփայական, մանկավարժահոգեբանական գրականության, հայ և արևմտյան մանկավարժների՝ անձի զարգացման տեսությունների վերլուծությունը, դպրոցում քաղաքացիական դաստիարակության նպատակի սահմանումը, ուսումնական հաստատությունում քաղաքացիական դաստիարակության և անձի դաստիարակվածության մակարդակների գնահատման չափանիշները, դպրոցի քաղաքացիական դաստիարակության գործընթացի կառավարման, իրականացման մանկավարժական համապարփակ մոդելը, մանկավարժական պայմանները և ժամանակակից քաղաքացու կատարելատիպը ձևավորում են ամբողջական համակարգ, որը արդիական, նպատակաուղղված, կազմակերպված և չափելի է դարձնում քաղաքացիական դաստիարակության գործընթացը դպրոցում:
2. Ավագ դպրոցականների շրջանում անցկացված «Ընտրություն» դերային խաղն ու ինքնագնահատման թեստի արդյունքների վերլուծությունը հավաստում են, որ դպրոցում ժամանակակից մոտեցումներով և մեթոդներով քաղաքացիական դաստիարակության իրականացումը հնարավոր է հատուկ մշակված մանկավարժական պայմանների առկայության դեպքում:
3. Հանդուրժողականությունը, լինելով անձի համալիր որակ, վճռական դեր է խաղում նրա բազային մշակույթի ձևավորման համակարգում: Հանդուրժող ուսուցչի բնութագիրը հիմնավորում է այն գաղափարը, որ հանդուրժողականությունը նաև ուսուցչի կարևոր անձնային որակ է:

Սակայն այն չպետք է շփոթել համբերություն անձնային որակի կամ ամենաթողություն երևույթի հետ: Մշակված բնութագրի համատեքստում ենթադրվում է, որ հանդուրժող անձը նաև անհանդուրժողականություն է ցուցաբերում բռնության ու թրաֆիքինգի, ագրեսիայի ու մարդատյացության, կոռուպցիայի ու անօրինականության, խտրականության ու անարդարության և այլ նմանատիպ բացասական երևույթների հանդեպ:

4. Մեր ատենախոսության հիմնախնդրի տեսանկյունից արդի դպրոցում առկա վիճակի վերլուծությունը թույլ է տալիս սահմանել կրթական համակարգում դպրոցականի քաղաքացիական դաստիարակությանը մեծապես խոչընդոտող կոռուպցիոն հետևյալ ռիսկերը.

- դպրոցի ղեկավարության ոչ ժողովրդավար, ոչ բաց և ոչ թափանցիկ աշխատաոճը,
- ուսուցիչների կողմից լրացուցիչ պարապմունքների կազմակերպումը, որոնք դառնում են միջոց՝ դրական, կամ գերազանց գնահատական ապահովելու համար,
- դասարանից դասարան աշակերտների թռիչքները,
- բացակայությունների անտեսումը՝ հատկապես ավագ դպրոցում,
- դպրոցի տնօրենի ընտրության թերի ընթացակարգը,
- ուսուցիչների աշխատանքի ընդունման ընթացակարգի խախտումները,
- դրամահավաքությունը դպրոցում,
- սովորողների նկատմամբ խտրական վերաբերմունքը, ծանոթ/բարեկամների ինստիտուտը,
- բուհական ընդունելության քննությունների պահանջների անհամապատասխանությունը դպրոցական ծրագրերին, որի արդյունքում զարգանում է կրկնուսույցների համակարգը,
- ուսուցչի ցածր աշխատավարձը,
- ծնողական և աշակերտական խորհուրդների ձևական մասնակցությունը դպրոցի կառավարման գործընթացին.
- մանկավարժական գործընթացի բոլոր սուբյեկտների իրավագիտակցության ցածր մակարդակը ,
- դպրոցում գիտակցված ենթարկվածության մթնոլորտի բացակայությունը և այլն:

5. Ավագ դպրոցում իրականացված դասալսումները, 8-12-րդ դասարաններում դասավանդվող «Հասարակագիտություն» առարկայի

ծրագրի, դասագրքերի և չափորոշիչների վերլուծությունը թույլ են տալիս նշել, որ

- «Հասարակագիտություն» առարկայի դասավանդումը միջառարկայական ինտեգրված կապերի ապահովմամբ և համագործակցային, փոխազդեցությունային, երկխոսությունային, ինքնաճանաչման, ինքնագնահատման մեթոդների կիրառմամբ իրականացնելը մեծապես կնպաստի դպրոցականների քաղաքացիական ինքնագիտակցության և արժանապատվության բարձրացմանը, նրանց իրավական և քաղաքական մշակույթների, քաղաքացիական ակտիվության և պատասխանատվության ձևավորմանը և ընտրություն կատարելու, որոշում կայացնելու, համապատասխան վարք դրսևորելու հմտությունների կայացմանը:
- Հանրակրթական դպրոցում գործածության մեջ գտնվող դասագրքերում տրված վարժությունները, հանձնարարությունները, առաջադրանքները, առաջարկվող մեթոդները ամբողջովին չեն ապահովում <<Հասարակագիտություն>> առարկայի պետական չափորոշիչների պահանջները, չեն նպաստում դասարանական, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների, դպրոցական և ընտանեկան դաստիարակությունների շարունակականության ապահովմանն ու ինտեգրմանը:

6. Հարցաթերթիկային ուսումնասիրությունների, «Ընտրություն» դերային խաղի արդյունքների ամփոփումը, ավագ դպրոցի ուսուցիչների հետ զրույցները թույլ են տալիս ասել, որ պարտադրված պատերազմի մեջ գտնվող մեզ նման երկրում նպատակահարմար է քաղաքացիական և հայրենասիրական դաստիարակությունը միահյուսել, անվանել քաղաքացիա-հայրենասիրական դաստիարակություն, քանզի մեզանում յուրաքանչյուր քաղաքացի պետք է հայրենասեր լինի և ցանկացած իրավիճակում պատրաստ լինի պաշտպանել հայրենիքը:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի ներքոնշյալ աշխատանքներում.

1. Ֆլջյան Լ., Փիլավջյան Գ., The main trends in the development of civic education in Armenia, «Բանբեր Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի», Մանկավարժություն և հասարակական գիտություններ 2(35): էջ 145-152: Երևան, Լինգվա, 2016:

2. Փիլավջյան Գ., Հանդուրժողականության դերը անձի զարգացման գործընթացում, «Բանբեր Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի», 2(39): էջ 76-84: Երևան, Լինգվա, 2017:
3. Փիլավջյան Գ., Իրավական կրթությունը քաղաքացիական դաստիարակության համատեքստում, «Բանբեր Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի», 2(39): էջ 122-129: Երևան, Լինգվա, 2017:
4. Փիլավջյան Գ., Քաղաքացիական դաստիարակության համատեքստում անձի զարգացման տեսությունների շուրջ, «Բանբեր Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի», 2(41): էջ 263-271: Երևան, Լինգվա, 2017:
5. Փիլավջյան Գ., Քաղաքացիական դիրքորոշման ձևավորման շուրջ քաղաքացիական դաստիարակության համատեքստում, «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի», 2(41): էջ 272-282: Երևան, Լինգվա, 2017:
6. Թոփուզյան Ա., Փիլավջյան Գ., Քաղաքացիական դաստիարակության նպատակի հիմնախնդիրը, «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի», 1(44), էջ 310-320: Երևան, Լինգվա, 2018թ.
7. Թոփուզյան Ա., Փիլավջյան Գ., Դպրոցականի քաղաքացիական դաստիարակության ժամանակակից համակարգը, «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի», 1(44): էջ 321-336: Երևան, Լինգվա, 2018:

ПИЛАВДЖЯН ГЕВОРГ ОГАНЕСОВИЧ

Проблемы гражданского воспитания в процессе развития личности школьника

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01 - “Теория и история педагогики.”.

Защита диссертации состоится 06.06.2018 г. В 12^{00} на заседании специализированного совета по педагогике 020 ВАК <<Педагогика>> при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 375010, Ереван, ул. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. На современном этапе социального развития быстро изменяются взаимоотношения человека и общества. В процессе развития личности эти изменения выдвигают новые перспективы развития гражданской позиции. В этих условиях личность, наделенная гражданским сознанием, выступает как мощный стимул для развития общества и основной рычаг организации и консолидации государства.

Актуальность исследования обусловлена следующими приоритетами, присущими системе государственного образования РА:

1. В системе формирования личности еще четко не определено понятие «гражданское воспитание личности». В большинстве случаев оно отождествляется с патриотическим или правовым воспитанием.
2. Современное общество характеризуется выраженной многополярностью, которая является результатом взаимной нетерпимости, отсутствия диалога. В процессе гражданского воспитания необходимо определить “толерантность” как интегративное качество личности, а также средство совместного преодоления существующих проблем людей, имеющих разные мнения.
3. Школа всегда играла решающую роль в процессе реформирования общества. В этих рамках образование стремится обеспечить гражданское образование человека и формировать нетерпимое отношение к коррупции. В то же время ученик, который нетерпим к коррупционным рискам, должен начать формировать на примере своей собственной школы.

Цель исследования на основании разностороннего изучения истории вопроса, а также на основании изучения текущего состояния в данной сфере разработать эффективную систему гражданского воспитания и педагогических условий.

Задачи исследования

1. Проанализировать на основании изучения философской и психолого-педагогической литературы теории по гражданскому воспитанию в армяноязычной и зарубежной литературе.
2. Сформулировать цели гражданского воспитания личности в учебных заведениях, критерии оценивания его воспитанности и гражданского воспитания, а также определения уровня профессиональной компетентности толерантного учителя.
3. Проанализировать учебники и учебные программы по предмету “Обществоведение”.
4. Разработать эффективную дидактическую систему совершенствования гражданского воспитания и педагогических условий.

Научная новизна исследования

Определена цель гражданского воспитания в учебном заведении.

2 Разработана всеобъемлющая система гражданского воспитания в школе, которая включает:

- критерии оценки гражданской воспитанности школьников и гражданской воспитательной работы, осуществляемой в учебных заведениях;
- идеал будущего гражданина;
- модель управления процессом гражданского воспитания;
- современная модель осуществления гражданского воспитания в школе;
- характеристика профессиональной компетентности толерантного учителя;
- разработаны педагогические условия совершенствования процесса гражданского воспитания школьников на современном этапе.

Теоретическое значение исследования. Цель гражданского образования в учебном заведении, критерии оценки гражданской воспитанности школьников и гражданской воспитательной работы, осуществляемой в учебных заведениях, модель управления процессом гражданского воспитания, современная модель осуществления гражданского воспитания в школе, характеристика профессиональной компетентности толерантного учителя, разработаные педагогические условия совершенствования процесса гражданского воспитания школьников на современном этапе и идеал будущего гражданина могут

- обогатить воспитательную практику старшей школы, лежащую в основе воспитательного процесса школы, способствовать эффективному управлению и систематизации всей работы гражданского воспитания в школе;
- быть полезными директорам школ, учителям-кураторам, преподавателям вузов, занимающимся вопросами теории и практики воспитания, специалистам по переподготовке педагогов и студентам педагогического вуза.

Содержание исследования отражено в структуре диссертации, которая состоит из введения, трех глав, заключения, библиографии и приложений. Объём диссертации составляет 155 страниц компьютерного текста.

По теме диссертации опубликовано 7 статей.

GEVORG HOVHANNES PILAVJYAN

PROBLEMS OF CIVIC EDUCATION IN THE PROCESS OF PUPILS' PERSONALITY DEVELOPMENT

Thesis submitted for the degree of Candidate of pedagogical sciences on the specialty 13.00.01 - "Theory and History of Pedagogy".

The defense of the thesis will be held at 12^{00} on june 6, 2018, at the session of the Special Board 020 "Pedagogy" HAC (Higher Attestation Commission) to award scientific degrees at Armenian State Pedagogical University named after Kh. Abovyan: 37510, 17 Tigran Mets, Yerevan.

SUMMARY

The relevance of the research. At the present stage of social development, a person-society relationship is rapidly changing. In the process of personal development, these changes put forward new prospects for the development of the civic position. In these conditions, a person endowed with civic consciousness acts as a powerful stimulus for the development of society and the main lever of organization and consolidation of the state.

The relevance of the study is determined by the following priorities inherent in the RA state education system:

1. The concept of "civil education of the individual" is still not clearly defined in the system of personality formation. In most cases, it is identified with patriotic or legal education.
2. Modern society is characterized by a pronounced multipolarity, which is the result of mutual intolerance, lack of dialogue. In the process of civic education, it is necessary to define "tolerance" as an integrative quality of the individual, as well as a means of jointly overcoming the existing problems of people with different opinions.
3. School has always played a decisive role in the process of reforming society. Within this framework, education seeks to provide a person's civic education and create an intolerant attitude towards corruption. At the same time, a student who is intolerant of corruption risks should begin to form on the example of his own school.

The aim of the research is to develop an effective system of civic education and pedagogical conditions on the basis of a comprehensive study of the history of the issue, and also on the basis of studying the current state in this field.

The objectives of the research are:

1. Analyze the theory of civic education in the Armenian and foreign literature on the basis of studying the philosophical and psychological-pedagogical literature.
2. Formulate the goals of civic education of the individual in educational institutions, the criteria for assessing his upbringing and civic education, as well as determining the level of professional competence of a tolerant teacher.
3. Analyze textbooks and curricula on the subject of "Social Science".
4. To develop an effective didactic system of improving civic education and pedagogical conditions.

Scientific novelty of the research:

1. It establishes the goal of civic education in an educational institution.
2. It develops a comprehensive system of civic education in the school, which includes:
   - criteria for assessing the civic education of schoolchildren and civil educational work carried out in educational institutions;
   - the ideal of the future citizen;
   - model of management in the process of civic education;
   - modern model of civic school education;
   - characteristics of the professional competence of a tolerant teacher;
3. It develops pedagogical conditions for improving the process of civic education of schoolchildren at the present stage.

Theoretical significance of the research. The purpose of civic school education, the criteria for assessing the civic schoolchildren education and civil educational work carried out in educational institutions, the model of managing the process of civic education, the modern model of civic education in school, the characteristics of the professional competence of the tolerant teacher, the pedagogical conditions for improving the process of civic education of schoolchildren at the present stage and the ideal of the future citizen can

- enrich the upbringing practice of the senior school, underlie the educational process of the school, promote effective management and systematization of all civic education work in the school;

• be useful to school principals, teacher-curators, university professors, who are interested in the theory and practice of upbringing, teacher trainers and retrainers and students of a pedagogical university.

The structure and volume of the research is reflected in the structure of the dissertation paper, which consists of Introduction, three chapters, conclusion, bibliography and appendices. The volume of the dissertation paper consists of 155 pages of computer text.

Seven published articles cover the topic of our dissertation paper.